

մասին արդեն իսկ նշվել է վերևում:

Վերոգրյալի հիման վրա՝ Դատարանը գտնում է, որ հայցը ենթակա է մերժման:

Սիաժամանակ, Դատարանն անդրադառնալով գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման հարցին, գտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոգրյալի հիման վրա և նկատի ունենալով, որ հայցը ենթակա է մերժման, իսկ Հայցվորի կողմից վճարվել է անհրաժեշտ պետական տուրքի գումարը, Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածով, Դատարանը.

Վ Ճ Ո Ւ Ց

«ԱՄ ՔԼԻՆԻԿ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ ներքին գործերի նախարարության՝ թիվ ՀՀ ՆԳՆ ՀԲՄԾՁԲ-2025/Թ-34 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.09.2025թ. թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշումը՝ «ԱՄ ՔԼԻՆԻԿ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ, անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է հրապարակվել օրվանից մեկամսյա ժամկետում բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

ԴԱՏԱՎՈՐ՝
Տ.ԳՐԻԳՈՐՅԱՆ



Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել <https://verify.e-gov.am> կայք
ում մուտքագրելով IEA1-6B29-4141-B634 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "[Էլեկտրոնային դատավարություն](https://cabinet.armlex.am)" համակարգ՝
cabinet.armlex.am